

# Բանկերի գործարար շրջանառության սովորույթը՝ կապված ավանդային պայմանագրի ժամկետի երկարաձգման հետ



Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (հոդված 14, 3-րդ կետ)՝ Հաշտարարը որոշում կայացնելիս հաշվի է առնում ոչ միայն ՀՀ օրենսդրության պահանջները, այլև գործարար վարքագծի և էթիկայի կանոնները, գործարար շրջանառության սովորույթները:

Բանկերում գործող գործարար շրջանառության սովորույթ ճշտելու անհրաժեշտություն է առաջացել նաև Հաշտարարի գրասենյակում ՀՀ-ում գործող բանկերից մեկի դեմ ուղղված պահանջը քննելիս: Պահանջի էությունը կայանում էր հետևյալում. քաղաքացի Ա-ն ավանդի պայմանագիր է կնքել հոգուտ երրորդ անձի՝ քաղաքացի Բ-ի: Պայմանագրով չի սահմանվել որևէ դրույթ պայմանագրի ժամկետի երկարաձգման վերաբերյալ: Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող՝ բանկում գործող ավանդային ծառայությունների մատուցման կանոններով սահմանվել է, որ ավանդի պայմանագրում այլ բան նախատեսված չլինելու դեպքում պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո ավանդի գումարը տեղափոխվում է ավանդատուի ընթացիկ բանկային հաշվին, իսկ հոգուտ երրորդ անձի ավանդի դեպքում՝ վերջինիս անունով ժամանակավոր բացվող բանկային հաշվին, եթե երրորդ անձը նախքան ժամկետի ավարտն արտահայտել է ավանդատուի իրավունքներից օգտվելու իր մտադրությունը: Հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո երրորդ անձը ներկայացել է բանկ՝ իր օգտին ներդրված գումարը ստանալու, սակայն բանկը հրաժարվել է նրան տրամադրել այն՝ պատճառաբանելով, որ վերջինս չի հայտնել ավանդից օգտվելու իր իրավունքի մասին նախքան պայմանագրի ժամկետի ավարտը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հաշտարարը փորձել է պարզել՝ ինչպիսին է նման դեպքերում բանկերի պրակտիկան:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 446 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգուտ երրորդ անձի է համարվում այն պայմանագիրը, որում կողմերը սահմանել են, որ պարտապանը պարտավոր է պարտավորությունը կատարել ոչ թե հոգուտ պարտատիրոջ, այլ՝ պայմանագրում նշված կամ չնշված երրորդ անձի, որն իրավունք ունի պարտապանից

պահանջել իր օգտին կատարելու պարտավորությունը: Իսկ նույն օրենսգրքի 905 հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ այն դեպքում, երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում ցպահանջ ավանդի պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Բացի այդ, Հաշտարարը խնդրել է բանկերին մասնագիտական կարծիք ներկայացնել նաև հետևյալի մասին:

Վերոնշյալ նորմերի համադրումից արդյո՞ք բխում է, որ օրենսգրքի 905 հոդվածի 4-րդ մասով սահմանված ավանդի ժամկետի երկարաձգումն իմպերատիվ է բանկի համար, սակայն կողմերը կարող են պայմանագրով սահմանել ցպահանջ ավանդի պայմաններից տարբերվող այլ պայմաններ, թե՞ տվյալ նորմի դիսպոզիտիվ բնույթը վերաբերում է նաև պայմանագրի երկարաձգմանը (այսինքն պայմանագրով կարելի է սահմանել, որ պայմանագիրը չի երկարաձգվում):

Արդյո՞ք ավանդի պայմանագրով (այդ թվում՝ հոգուտ երրորդ անձի կնքված) բանկի ստանձնած պարտավորությունները դադարում են պայմանագրի գործողության ժամկետի ավարտով, թե կատարմամբ:

Պետք է նշել, որ բանկերից ստացված կարծիքները ընդհանուր առմամբ, չեն ձևավորել գործարար շրջանառության սովորույթ, քանի որ նախ՝ պատասխաններ են ստացվել թվով քիչ բանկերից, և երկրորդ՝ քիչ ստացված պատասխաններում առկա են եղել տարբեր մոտեցումներ: Մասնավորապես՝

- Բանկերի մի մասը նշել է, որ կարծում է, որ երրորդ անձի ավանդային պայմանագրով ստանձնած պարտավորությունները դադարում են ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ավարտով, այլ ոչ թե կատարմամբ, և պայմանագրով կարող է սահմանվել, որ պայմանագրի ժամկետի ավարտով կողմերի իրավունքներն ու պարտականությունները դադարում են:

- Բանկերի մյուս մասը նշել է, որ հոգուտ երրորդ անձի ավանդային պայմանագրով բանկը ստանձնում է երկու պարտավորություն՝ ա) ավանդի վրա հաշվեգրել տոկոսներ, բ) վերադարձնել ավանդն ու տոկոսները: Հօգուտ երրորդ անձի կնքած ավանդի պայմանագրի ժամկետի ավարտով դադարում է միայն ավանդի վրա պայմանագրով սահմանված

տոկոսներ հաշվեգրելու բանկի պարտավորությունը, իսկ ավանդը և տոկոսները վերադարձնելու՝ բանկի պարտավորությունը դադարում

- միայն դրա կատարմամբ, այսինքն՝ ավանդատուին կամ երրորդ անձին, ում օգտին կնքվել է պայմանագիրը, ավանդը և տոկոսները վերադարձնելով: Բանկերի այս խումբը նշել է, որ ավանդային պայմանագիրը ժամկետի ավարտից հետո իմպերատիվ կերպով համարվում է երկարաձգված, սակայն կողմերը կարող են սահմանել պայմանագրի երկարաձգումից հետո գործող այլ պայմաններ, քան սահմանված է եղել պայմանագրում: